ԱՐՄԱՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՂԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ցարտկաստանի համար տարեկրջլանը 5 ֆր. կամ 2 րբլ. Թղթդրժ.

Ցարիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 10րդ չրջանի (94 օգոստ.—95 մայիս) բաժնորդագինն է 20 ֆր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսի համար ալ որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ ֆր. հաշուելով և 1895 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրար պէտք է դրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

ԹԻՒ 39

1894 ԴԵԿՏԵՄԲԵՐ 12

ՆՈՅԵՄԲԵՐ 30 (Հ. Տ.)

ՕՐԻՆԱԿԱՆ

Կը հրատարակուի Դշ. և Երք. օրեր

ՊԱՏՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։ Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Ծանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեծ յուզում հայ գաղթականութիւնները մէջ. — Հեռագիր Վառնայէն. — Վէն. կաթողիկոսի ճանապարհորդութիւնը. — Վէն. կաթողիկոսի ներկայացուցիչը Զարի պալատին մէջ. — Հայաստանի խնդիրը եւ անգլիական ու ամերիկեան մամուլը. — Հայաստանի խնդիրը եւ Իտալիա. — Սասուն. — Պատրիարքական Գեր. Տեղապահը. — Բողոքագիրները. — Նամակ Պրազիլիայէն (Դուռուգ-Ալբա). — Ծանուցումներ։

ՄԵՆ ՅԻՒԶՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԱՐԱՐԱՓԵԼԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Հայաստանի Հայերի սարսափելի կոտորածը, ինչպէս բնական էր, սաստիկ յուզում պատճառած է բոլոր հայ գաղթականութիւններին մէջ և ամենքն ալ սկսած են միահամուռ ձայն բարձրացնել հայ ազգը բնաջինջ ընելու համար թիւրք կառավարութեան ձեռնարկած միջոցներուն և իւր գործերի արած սոսկալի կոտորածներուն ու խժդժութիւններուն դէմ։

Եւրոպաի, Ամերիկաի, Ափրիկէի ամենայառին քաղաքին մէջ անգամ ուր մի քանի Հայեր կը գտնուին, մեզ հասած տեղեկութիւններուն նայելով, ամենամեծ յուզում կը տիրէ Հայաստանի սարսափելի կոտորածներուն պատմութիւնները լսելով, որոնք, ատ՛ղ, Բ. Դրան արած պաշտօնական հերքումներուն հակառակ, հետզհետէ աւելի մանրամասնօրէն կատուգուին, օրէ օր աւելի սարսափելի տեսարանները կը յայտնուին։

Ջանազան կողմերէ հայ գաղթականութիւնները սկսած են հեռագիրներ ղրկել Էջմիածին Վեհ. Կաթողիկոսին աղաչելով որ Թիւրքիոյ մէջ իր թշուառ հօտի կրած տառապանքներուն մի դարման տարուելու համար դիմումներ անէ Ռուսիոյ Վեհ. Ցարին որ դարերէ ի վեր հզօր պաշտպանն եղած է Արեւելքի ճնշուած քրիստոնեայներուն։

ՀԵՌԱԳԻՐ ՎԱՌՆԱՅԷՆ

ՎԱՌՆԱՅԷՆ երկուշաբթի օր (դեկտ. 10) հետեւեալ հեռագիրն ստացանք։

«Հայաստանի մէջ 15,000էն աւելի Հայերի կոտորուելուն պատճառով տեղիս հայ գաղթականութիւնը մի մեծ ցոյց ըրաւ։ Ամբոխ մը հաւաքուելով Սուլթանի պալատին առջեւ կանչեց որ Սուլթան ելլէ իրեն խօսի։ Սուլթան ելաւ պատուհանը, ամբոխը հանդարտեցուց եւ ըսաւ որ Հայերուն վրայ եղած կոտորածները ինք չէ հրամայած, այլ Քիւրտերը ըրած են։ Ամբոխը պատասխանեց որ Քիւրտերը Սուլթանին զէնքերն են, ինչպէս Հայերն ալ իրենցը։ Ամբոխը ցրուեցաւ։ Ցետոյ Սուլթան հրամայեց որ 3000 մարդիկ ներկայ կը գտնուէին։ Մի պատգամաւորութիւն կազմուեցաւ որ գնաց ներկայացաւ մեծ պետութիւնների տեղս ունեցած ներկայացուցիչներուն, անոնց միջոցով իւրաքանչիւրի կառավարութեան Հայաստանի սոսկալի վիճակը ներկայացնելու և Պէրլինի դաշնագրի 61րդ յօդուածի գործադրութիւնը խնդրելու համար որ Հայաստանի մէջ ամեն օր գործուող հարստահարութիւններուն վերջ տրուելու միակ միջոցն է։ Պատգամաւորութիւնը հիւպատոսարանները գնացած ժամանակ ժողովրդի բազմութիւնը կուզեկցէր իրեն։

«Հայ գաղթականութեան միջին. կի որոշմանը համեմատ, իր նախագահ Արժ. Տ. Յովհան Քահանայ Մանդակունին հեռագրեց Էջմիածին Վեհ. Կաթողիկոսին, աղաչելով որ Նորին Ս. Հափառութեան Նիկոլա Բ Զարի գթութիւնը հայցէ թիւրքական Հայաստանի մէջ բնակող իրենց թշուառ եղբայրների փրկութեանը համար։»

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Վեհ. Կաթողիկոսը նոյեմբեր 20/2 դեկտեմբերին Էջմիածնէն ճանբայ ելած է դէպի Թիֆլիս։

Նորին Վեհափառութեան կուղեկցին երեւանի Թեմակալ Գեր. Կիւրեղ եպիսկոպոս Սրապեանը և Արժ. Յուսիկ և Տիրայր աբեղայները։

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԵՐԿԱՑՈՒՑԻՉԸ ԶԱՐԻ ՊԱԼԱՏԻՆ ՄԷՋ

Ցայտնի է մեր ընթերցողների որ Վեհ. Կաթողիկոսը Թիֆլիզէ Առաջնորդ Գեր. Գէորգ Եպիսկոպոս Սուրէնեանը իր կողմէ ներկայացուցիչ ղրկած էր Պետերբուրգ հանգուցեալ Զարի թաղմանը ներկայ գտնուելու համար։ Ռաղմավիրական ճանապարհին վրայ պատահած արգելքների և յապաղումների պատճառով, Գեր. Սուրէնեան նոյ. 8/20ի առաւօտ կըբնդ էր Պետերբուրգ հասնիլ մինչդեռ հանգուցեալ Ալէքսանդր Գ. կայսրի թաղումը նախորդ օր կատարուած էր։ Գեր. Սուրէնեան նոյն օր այցելութիւններ կուտայ հանրային կրթութեան նախարար Հայազգի Կոմս Դելիանեանցին, Իշխան Աբամելիք Լազարեանին և Կովկասի կառավարչապետ Պր. Շերեմետեւին։

Սուրէնեան Սրբազան պալատական նախարարութեան յատուկ հրաւէրին համեմատ ներկայ գտնուեր է հանգուցեալ Զարի մահուան 20րդ օրին առթով Ս. Պետրոս և Պօղոս եկեղեցիին մէջ Նիկոլա Բ Զարին, մայր կայսրուհիին և կայսերական ամբողջ Գերդաստանին ներկայութեամբ կատարուած հոգեհանգստի արարողութեանը, Հայաստանեայց եկեղեցիին կողմէն աղօթելով հանգուցեալ Զարին համար։ Կրօնական պաշտամունքի միջոցին Գեր. Սուրէնեան Սրբազան մեր ազգային սովորութեան համեմատ կրած վեղարովը մասնաւոր ուշադրութեան առարկայ դարձեր է եկեղեցին ներկայ գտնուող Ռուսիոյ և ուրիշ տերութիւնների բարձրաստիճան անձերի կողմէն։

Նորին կայսերական Մեծութեան Նիկոլա Բ Զարի կողմէն եղած յատուկ հրաւէրով՝ ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչը պատիւ ունեցեր էնոյեմբեր 14/26ին Ձմեռային պալատը հիւրընկալուելով ներկայ գտնուելու Նորին Վեհափառութեան Զարին Իշխանուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի հետ պսակադրութեան արարողութեանը և հարսանեկան հանդէսին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՈՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Անգլիաի և Ամերիկաի լրագիրները լի են Հայաստանի խնդրին վերաբերեալ լուրերով, խորհրդածութիւններով եւ պատկերներով։

Դեկտ. 6 թուակիր «Էքօ» կարեւոր թերթը մի ազդու խմբագրականով անպէտ կը համարի այլ եւս կարեւորութիւն տալ թրքական խոստումներին և տեղեկագիրներուն և կառաջարկէ մեծ տերութիւնների մանաւանդ Ռուսիաի ընկերակցութեամբ կազմակերպել առանձին Հայաստանի նահանգ Բրիստոնեայ կուսակալով և այլն։

Նոյն առթիւ հերքելով մի քանի թերթերի կարծիքը թէ Սուլթանը անտեղեակ է Սասունի ջարդէն, «Ազեհական տպիտութիւն» կանուանէ այդ կարծիքը և կը հարցնէ թէ ուրեմն ինչի՞ եաւար է Ապտ-ուլ-Համիտը հողագնաց վրայ...։

Դեկտ. 7ի (Սթանտարտ) Standardը կը հրատարակէ հեռագիրներ որոնցմէ կը քաղենք հետեւեալները։

Վառնա եչ. երկ.

Սուլթանի պալատը տագնապի մէջ է Ս. Պետերբուրգի ար քունի մէկ հարուածին պատճառով։ Սուլթանը կայսերական հարանիքին առթով յոյժ խանդավառ չնորհաւորութիւնները հաղորդած էր, մինչդեռ առթիւ յայտնելով թէ մտադիր է ղրկել մի յատուկ պատուիրակութիւն, մասնաւոր Ֆուատ փաշայի գլխաւորութեամբ և նորագոյն մաղթանքներով, և ի հարկէ հարսանեկան ընծայներով։ Ուրիշ վեհապետների կողմէն ղրկուած նմանօրինակ հեռագիրներուն սիրալիր պատասխանները իսկոյն տրուած էին. բայց բան մը չէր հաղորդուած ԵԼԼտըղի Բէօշկը։

Սուլթանը անհուն մտատանջութեան ենթարկուած էր և գրեթէ պատասխանէ յոյսը կտրած, երբ վերջապէս անհամբեր սպասուած գրութիւնը հասաւ։ Սակայն պարզ ձեւական բան մ՛էր այդ պատասխան որ Ապտ-ուլ-Համիտի չնորհաւորութիւնների համար գոհունակութիւն միայն կը պարունակէր, իսկ պատուիրակութեան մասին՝ ոչինչ։ Թրքական պալատը վհատած վիճակի մէջ է ասոր վրայ, նկատելով մանաւանդ որ քիչ առաջ բրիտանական կառավարութիւնն ալ փափկօրէն հասկցուցած էր իրեն թէ ներկայ ժամանակս նպաստաւոր չէ ընդունելու օսմանեան այն պատուիրակութիւն որ Սուլթանի կողմէն Վեհափառ Թագուհիին և կայսեր Իշխանին շնորհաւորներ պիտի բերէր։ Այս յանդիմանութիւններ կընծայուին Վեհափառ Ջարին կողմէն Թիւրքերին դէմ զգացուած սաստիկ դժգոհութեանը Հայաստանի մէջ կատարուած չարագործութիւններուն պատճառով։

Ուշինկթըն եչ. գիշեր

Անշուշտ Ամերիկեան թերթերի աղմուկներուն ազդեցութեամբը Սուլթանը առաջարկած է Նախագահ Քլիվլէնտին մի Ամերիկացի պաշտօնեայ կցել այն Օսմանեան Քննիչ յանձնա-

ժողովին որ ճամբայ ելած է դէպի Սասուն։ Նախագահը պատասխանելով ցաւ յայտնած է թէ անկարող է այս խնդիրը ընդունելու։

վիէննա դեկտ. 6

Պօլսէն եկած հեռագրի մը նայելով, Սասուն գաւառի խռովութիւններուն մասին Բ.Դրան կողմէն վերջերս հրատարակուած յայտարարութիւնը՝ որ այդ դէպքերը կը ներկայացնէ իբրեւ սովորական աւազակութիւններ, չատ վատ տպաւորութիւն արած է բրիտանական կառավարութեան վրայ, որովհետեւ հասկցուած է այդ խնդրի ապստամբական երեւոյթը որ Քիւրտերի յափշտակութիւններուն դէմ կեանքի և ինչքի ապահովութեան չդոյութենէն ծագած անտանելի կացութեան հետեւանքն եղած է։ Ասկէ զատ, Դրան յայտարարութիւնը՝ կայսերական քննիչ յանձնաժողովին արդիւնքը կանխաւ գտնելու չանք մը կը համարուի։ Հետեւաբար Բրիտանական դեսպանը նորագոյն դիտողութիւններ կը յայտնէ Դրան։

Դեկտ. 6ի երեկոյեան «Էյթի» քլուպին մէջ արտաքին գործերի նախարար Քիմպըրլի է պատիւ երեն սըր-ուած հայկերոյթի սովորական ճառին մէջ ամենէն առաջ հայկական խնդրին վրայ խօսելով, սա բառերով վերջացուց. «Պարոննե՛ր, սա կրնամ ապահովել ձեզ որ անգլիական կառավարութիւնը խորապէս կզգայ խնդրին ծանրակշռութիւնը և մենք մեր պարտականութիւնն կատարելու չը պիտի թերանանք։» Սոյն խօսքերը ներկայները կողմէն բարձրաձայն և ընդհանուր ծափահարութեամբ ընդունուեցան։

Բոլոր լրագիրները, թէ՛ պահպանողական և թէ՛ ազատական, «Տէյլի Նիւզ», «Թայմզ», «Սթանտարտ», «Տէյլի Քրօնիքըլ», «Վէսթմինսթր Կազէթ», «Տէյլի Կրաֆիք», «Լ.քօ», «Սըն» և այլն թերթեր, պարբերաբար երկար խմբագրականներ նուիրելով, կառավարութեան անմիջական և ազդու միջամտութիւնը կը պահանջեն և վերջերս Ռուսահետ մշակուած լաւագոյն յարաբերութիւնը Թշուառ Հայաստանի մասին նպաստաւոր ձեռնարկի մը պատեհ առիթը կը համարեն։

ՀԱՑԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԻՏԱԼԻԱ.

Հռոմէն կը հեռագրեն Լոնտոնի «Տէյլի Քրօնիքըլ» լրագրին հետեւեալը.

«Հայաստանի գործերին համար վճռելիք դիմումներուն մասին իտալական կառավարութիւնը բոլորովին հաճայն է անգլիական կառավարութեան հետ։ Իտալիա կատարեալ հաւանութիւն կուտայ եւրոպական միջամտութեան եթէ պէտք է։»

Լոնտոնի անգլիական դեսպան Թօրինկթընի կոմսը վաղը (դեկտ. 13) Լոնտոնէն կը մեկնի Իտալիա երթալու համար։

ՍԱՍՈՒՆ

Կարին, հոկտ. 20/1 նոյ.

Միայն վիշտ և տառապանք, միայն արտասուք, միայն յուսահատութիւն և աղիողորմ հառաչներ...

Կը ներէք ինձ, յարգոյ խմբագիր, և ձեր յարգոյ ընթերցողք, որ այսպիսի ծանր հառաչանօք կսկսիմ այսօրուան նամակս։ Իմ հառաչանքս, չեմ ծածկեր, լի է նա մի գառն զայրացմամբ, զայրացմամբ այն հայ թղթակցին, խո՛ւլ, խո՛ւլ մի յանկիւն դանուող մի անհատի, որ պաշարեալ բռնութեան, խստութեան և չղթաների կապանքներով և որ կը տեսնէ չտեսնուածը և այդ բոլորը կը հաղորդէ հեռաւոր եղբայրներուն, որոնք սակայն կարծես ոչ ականջ ունին լսելու, ոչ աչք ունին տեսնելու և ոչ սիրտ ունին դթալու։ Իւրաքանչիւր անգամ, որ գրիչս կ'առնեմ կատարել պարտքս իբրեւ թղթակից, սիրտս արեամբ կը լեցուի, յիշելով այն պատկերները, որ կը վերանորոգուին աչքիս առջեւ. վերջ չկո՞յ սոցա, կը մտածեմ. մինէ ես ըո՞ւ պիտի լինիմ, որ յաւիտեան աւերածութեան վրայ ողբամ, և մինէ պիտի չգտնուի՞ն սըբատեր, որոնք եթէ չզգան այն՝ ինչ այստեղ կը զգացուի, գէթ երեւակայեն այստեղ կատարուածը։ Ինձի կը թուի որ այս ամենուն ականատես թղթակիցն աշխարհիս ամենադժբաղդ մարդն է որովհետեւ այդ ամենէն աչքերը յականջից կը կապուցուին, լեռը կը նուաղի, լեզուն կը կարկամի և կը պապանձուի... Եւ ո՞րը գրեմ և ո՞րը թողնեմ։ Կը ներէք, մի՛ մեղադրէք ինձ, որ իմ սովորական պարզ բիւնութիւնն չկրնալով պահել, քիչ մը արցունք կը թափեմ. պիտի տեսնել մեր տեսածը և կը հասկանաք։ Սակայն ի գործ. սկսենք մեր պատմութեան չարունակութիւն։

Պատերազմի սկզբնաւորութենէն մինչեւ ի վախճանը, ինչպէս արդէն ասացինք նախկին գրութիւններով, Սասնոյ սիրտն ու հոգին՝ Տալուորիկը անխորտակելի չղթայով օղակուած ու պարաւանդուած էր կիներ, ձագաղջուր, կեծնուկ և լճէ գառառների կողմից վերահասող բացի զինուորականներէն գնդերէն ու 8 թնդանօթներէն, յայտնի ասպատակապետ Պօտանա ամիրզատա կենդոյէ փախուստ էլաղաստու 1500ից աւելի խառնիճաղանճ հեծելագունդ և հետեւակ զրկերով։ Տիգրանակերտի, Հալէբի և մինչեւ անգամ Շամի ու Ամրաբիայի կողմերէն նոյնպէս չարունակ կըփութային զօրացնել բանակը, թո՛ղ ֆերիք փաշայի հինգ ընտրական ու տասնեակ թնդանօթների վրահասումը։ Մըլանցի Թահսին աղայի որդի Մահմատ էլ-ազատին իւր 3000ից անց վայրենի արաբևառն թիկնապահներով, և ընդ սոցին ուրիշ տաս արիւնռուշտ քիւրդ աշիրաթներով, որպիսիք են Պաասկանցին, Բըքրանցին, Խարըքցին, Նատըրանցին, Ուշքոտցին, Բըլբըքցին, Ծատուանցին, Սլիվանցին, Բշերցին և ուրիշ մանրիկ տեղերով։ Եւ այդ ա՛նել դրութեամբ անհնարին դարձրին Տալուորկայ դուրս գալու իւր շրջանակից, անցնել գէթ Սատանի կամուրջի այն միւս կողմ և օգնութեան չտապել իւր այն թեւ ու թիկունք օգնութեան կարօտ միւս գաւառացի դիւղօրէից, որ նոյնպէս աւելի քան ղինքն պարսպուած էր տասն հազարաւոր քրդական և տաճկական ջոլոր-ներով։

Թողնենք գոնէ ժամանակաւորապէս զՏալուորիկ իւր մարդկեղէն ու հրեղէն ցանկի մէջ, մանաւանդ որ նա աւելի հեռու ու խորն է մեզանից, անցնենք և մի պահ կանդ առնենք նորանից այժմ բռնի անջատուած ու բաժանուած միւս մերձակայ գաւառացիների վրայ։

Երբ Անտարա լեառն ապաստանած Շէնքցին, Սէմալցին, Կըլեկուզանցին, Բիհրըմցին և վերջապէս Շատաղի, Խիզանայ, Խուլբայ և միւս դիւղօրայքի անխտիր — արական և իգական, ծեր, մանուկ — բնակչութիւնը իւր 19 օրուայ անընդհատ և անպարտելի ճակատամարտով՝ ընդդէմ 569 կորուստի՝ կունենայ միմիայն 10 նահատակ, որոնցից 5 երիտասարդ, 3 կին և 2 ալեւոր, փլուդերը և քրդական զդեստներով զդեստաւորուած զօրքերը (որովհետեւ կառավարութիւնը առաջին անգամ այդ միջոցին դիմեց) ի խուճապի կը դիմեն. իսկ երբ գաղանաբարոյ Զաքի փաշայի ընդհանուր հրամանատարութեամբ անմիջապէս օգնութեան կը հասնին Մուշի, Կարինի, Երզնկայի, Վանի և Բաղէշի վիլայէթներից փութացող զօրաց դնդերը 21 լեռնային թնդանօթներով և անխնայ ամբակոծել կը հրամայէ, այդ ժամին, այլ եւս ոգեւորութենէն և ուտեստից բոլորովին զուրկ այդ պատերազմիկ ժողովուրդը՝ մանաւանդ տեղատարափ հրաշէկ գնդակների տակ, կըսկսի լքանել, ջմել, չփոթիլ և անձնատուր լինելու կարիք զգալ. ընդ ամին, երբ միւս կողմից նոցա այդ յուսահատական վայրկեաններին երդմամբ քանիցս կը լսուի և Զաքի փաշայի արձակած խորամանկ ներման և հաշտութեան հրամանն, այդ բանը աւելի կ'երկպառակէ ճարահատ ժողովըրդին։ Թէեւ արեամբ նահատակեալ Մոլխէսեան Գրիգոն կընդդիմանայ իւր այդ բազմակարծիք և ընկճուած արենակիցներին այդ միանգամից կորստաբեր վճռական քայլին, կը խնդրէ, կը ճգնի համոզել նոցա որ դիմադրեն մինչեւ մահը, սակայն այդպիսի ծանր ճգնաժամերին, այն եւս ինքնակամ ամբոխը, լսողն ո՞վ, և հետեւողն ո՞վ։ Ժողովրդի մեծագոյն մասը Սէմալ գիւղի Տէր-Յովհաննէսի, ոչ կաժէ Շատոյի, Գրիգէ տան կառավարիչների, Յովհաննէսի և մի քանի ուրիշ առաջատար անձանց առաջնորդութեամբ անձնատուր կը լինի։ Նոցա թշնամի վարաղները տեսնելով հակառակորդ որսի ինքնաբեր իրանց թակարթին մատնուիլը, նոյն րոպէին արականներից կը բաժանէ իգական սեռը և վերջինս կը մատնէ իւր մոլեգին ամբոխի վայրագ կրից, իսկ արականները՝ թուով մօտ 60 չահել-չխոհան երիտասարդներ՝ մի անթափառամ փընջիկ կազմելով, երեք օր շարունակ անասուաղ և անկրկնի տանջանքների ներքոյ պահելուց ղինի սրախողխող կանէ և կը լեցնէ մի նորափոր հորի մէջ։ Եւ ահա այդ եղերական սոսկալի դէպքից անմիջապէս կը յաջորդէ ու կը տիրէ մի ահաբեկ սարսափ անխնամ և անպաշտպան ժողովրդին վրայ, այնպէս որ մօրը մոռացնել կուտայ իւր սիրասուն և փափկիկ մանկան, այրին՝ ամուսնուն, սիրականին՝ սիրելւոյն, վերջապէս մի ընդհանուր իրարանցում, սոսկում, զարհուրում և փախուստ փախստեան վրայ։ Ժողովրդի այդ չփոթութենից, մոլորումներից օգտուած և խրախուսուած թշնամին կը հետապնդէ նորան և անխնայ՝ որպէս հասած ու չորացած խոտ՝ կը հնձէ։ Ահա այդ ու կսկիծ սկզբն առնել Սասնոյ բազդի անիւի հակադարձումը, և այնուհետեւ նոցա լուռ բաժին կը մնայ այրուձին ու կոտորումը, ցնծանքն ու անարգանքը. սո՛ւր, հո՛ւր և սրածութիւն...

Մի միայն Շատախի, Խուլբայ, Խանայ գաւառների գիւղերից կասպատակուի, կաւերուի, կը քանդուի ու կը կողոպտուի 36 երբեմն չէն ու մարդաբնակ գիւղերը, որոնցից 3ը, այն է Շէնքը, Սէմալ և Կըլէյկուզան գիւղերը՝ կողոպտելուց յետոյ կայրեն և մոխիր կը դարձնեն։ Նոյնպէս հրոյ ճարակ կանեն Աղբիկ գիւղի Ս. Խաչ եկեղեցին, Շէնքցւոց՝ Ս. Սարգիս, Կըլեյկուզայ՝ Ս. Թուխ-Մանուկ և Սէմալ՝ Ս. Գէորգ եկեղեցիները իրանց նուիրական սպասներով ու անօթներով։

Իսկ այդ մեծ ճակատամարտի մէջ կընկնեն և սոսկալի տանջանքների տակ կըկնքեն իրանց երկրաւոր կեանքը հետեւեալ իրանց արիութեամբ յայտնի անձինք։

Սէմալ գիւղի Տէր-Յովհաննէս գերի կընկնի, թշնամին ողջ ողջ փորելով նորա աչքերը կը հրամայէ խլացել, որ և անխուով կըպարէ սպռմոսկով «օրհնեա՛, անձն իմ, զՏէր». ապա թրով կըկարաճեն մաս մաս։ Շէնքցւոց գիւղի Տէր-Յօհաննէս իւր հինգ քաջամարտիկ ընկերներով և նոյն գիւղի Լչեան արիասիրտ և գեղադէմ Մովսէսեան Գրիգոն, որ բացի Սասնոյ մօտ, նոյն իսկ Մշոյ և աւելի հեռու չրջանների մէջ եւս քաջութեան մեծ հռչակ ունէր. գերի կընկնի Կըլէյկուզանայ Տէր-Ղազարեան Տէր-Պետրոսը, որ Տալուորկայ անցեալ տարուայ պատերազմին՝ Գրիգոյի հետ միասին՝ քաջութեան մեծ համբաւ էր ստացած։ Աստուծոյ այդ արժանի ազատարը՝ նոյն կռուին՝ իւր հօտի արեան ծարաւի Քըրանցի աշերաթից միայն ինքը 7 քիւրդ ազիւս կռուով սպանելով՝ նոցա պիղծ արիւնով ձեռքերը լուացած էր։ Տէր Պետրոսի նահատակութեան անյագ ծարաւի թշնամին ողջ ողջ կըքերթէ նորա կաշին մինչեւ գօտակապ. նորա այդ քերթուած մարմնից կըզուլէ նորա վարդագոյն միսը, կըշամփրէ, կը խորովէ նորան և ապա մեծ ախորժանօք կըլափէ. այդ նոզկալի դէպքին՝ կենդանի աչօք ականատես նաւթեամբ կըվխտէ այդ նոր Ղեւոնդը,

(Շար. 38րդ տպագր. եւ վերջ)

ՅԱՅԳՍՑՈՎԱՄՈՒՄ

Փրկեն զղջմամբ ու ինքնաքննութեամբ...» Ա. Պատկանեան։

Ամէն անգամ որ ես ինձ մօտ կը զգամ ինքնաքննութեան ոգին, ամէն անգամ որ ես կը զգամ ինքնաքննութեան պէտքը, ես կը զգամ նաեւ ինքնագոհութեան պէտքը։ Ինքնագոհութիւնը ինքնաքննութեան հետեւանքն է։ Ինքնաքննութիւնը ինքնագոհութեան պատճառն է։ Ինքնաքննութիւնը ինքնագոհութեան մայրն է։ Ինքնագոհութիւնը ինքնաքննութեան զաւակն է։ Ինքնաքննութիւնը ինքնագոհութեան հայրն է։ Ինքնագոհութիւնը ինքնաքննութեան որդին է։ Ինքնաքննութիւնը ինքնագոհութեան ծնողն է։ Ինքնագոհութիւնը ինքնաքննութեան ծնունդն

Աշխէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չկուտիր։

Վ. Փափազեանց—Պատկերներթիւրքահայերի կեանքէն (Հեղինակին 11 հատ նաբնտիր վէպիկները)։

4 ֆրանք ։

Բ. Ց. Վարդուկեանց. ԴԱՑԼԱՑԼԻԿ Դրուագ Ա։ (Հեղինակին յատուկ ոճն եղող ճարտար բանահիւսութեամբ և գրաբար լեզուով գրուած ոտանաւորներ են Աստուծոյ արարչագործութեան հրաշալիքներն պատմող)։ Գինն է 75 սանթիմ ։

Թօսք վասն Հայրենասիրութեան Բ տպագրութիւն 60 սնթմ։

Հ. կղեմէս վ. Սիպիլեան, Դասատորութիւն Ռուբինեան դրամոց (Մէկ լուսանկարատիպ պատկերով, վեց վիմատիպ տախտակօք — 79 պատկեր —, և 53 պատկերօք ի բնագրին, որոց մէջ կան բազմաթիւ չհրատարակեալներ։ Մեծ 8° երես ԺՋ+88+32) Վիէննա 1892 ։ Գինն 7 ֆրանք։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԺԳ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՑՐԵՆԱՍԷՐ
(ՋԱՓԱՐԻԱ ՍԹՈՑԱՆՈՎ)

ՖՐԱՆՍԷՐԵՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ
Մ ԿՐՏՒԶ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1894

Պուլկարիոյ անկախութեան հերոսներէ մէկին, Զաքարիա Սթոյանովի, որ իր ընդունակութեան և հայրենասիրական ոգեւորութեան շնորհով յաջողեցաւ մի լեռնաբնակ գիւղացի հովուի պարզ վիճակէն հետզհետէ արհեստաւոր, վարժապետ, յեղափոխական գործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուլկարիոյ Ազգային ժողովին նախագահ դառնալ, խիստ հետաքրքրաշարժ կենսագրութիւն է, ուր ուշադրութեան արժանի տեղեկութիւններ կան նաեւ Պուլկարիոյ թիւրքի լուծէն ազատելու աշխատող պուլկար հայրենասէր յեղափոխականներու գործունէութեանը մասին։ Սկիզբը գրուած է նաեւ հեղինակին, Բրօֆէսէօր Լուի Լէժէի, և Թարգմանչին միջեւ եղած թղթակցութիւնը այս գրքի հայերէն թարգմանութեան առթով։

Հեղինակը շատ իրաւամբ կը գրէ իր յառաջաբանի վերջ թէ «Ժամանակ պիտի պատճառէ ինձ նթէ ընթերցողներու հետաքրքրութիւնը չարժի պետական մարդ դարձած մի դիւզացու այս վաւերական պատմութեան վրայ։»

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 ֆրանգ և 40 սանթիմ ։

Տարածելու համար մեծ քանակութեամբ առնողներին 25 % զեղչ կը վճռի ։

(Պարսկաստանի Հայերին համար 1 ֆրանգ է։)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ Է ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ (1794–1894) ՅՈՒԲԵԼԻՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Այս պատկեր որ «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութիւնը հրատարակած է ներկայ 1894 Թուականի Հայ ազգին մէջ լրագրի սկզբնաւորութեան դարադարձը լինելուն առթիվ, մեծ միամեայ դիրքով է լուսատիպ (phototypique), որի մեծութիւնն է 50 × 35 սանտիմեար, տպուած 70 × 45 սանտիմեար քարտոնի (carton) վրայ այլ և այլ բնագրով ։ Մէջ տեղը դրուած է հայ լրագրութեան հիմնադրին՝ Տ. Յարութիւն Քհնյ. Շմաւոնեանի պատկերը, և բոլորտիքը՝ 1894ին հայերէն լեզուով հրատարակուող բոլոր լրագիրներըը իրենց խմբագրապետներու պատկերներով ։

Գինն է 1 րբլ. 50 կպկ. կամ 4 ֆրանգ, ճանապարհածախսով միասին։ Պարսկաստանի համար 1 րբլ. ռսկն. կամ 2 ֆր. եւ 50 սնթմ.

Սոյն առթիւ կը յայտնենք որ լոյս տեսած է նաեւ

Գալէմքեարեան Հ. Գ., Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը։ Հտր. Ա. 1794-1860. մէկ լուսատիպ պատկերով ։ Վիէննա Մխիթարեան տպարան 1893։ Գինն՝ ճանապարհածախսով՝ րբլ. 1 կամ 2 ֆր. և 50 սանթիմ ։

Վերոդրեալ պատկերն ու գիրքը ստանալու համար, դիմել Վիէննա Մխիթարեան Պատուարժան Միաբանութեան որ հրատարակած է զանոնք ։

Կարելի է նաեւ ստանալ զանոնք, դիմելով Արմենիայի խմբագրութեան։

ՀԱՑՈՑ ՀԱՑԲԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՏՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ համառօտ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու ։

Կը խնդրուի ամեն հայրենասէր Հայերէ իրենց չրջանի մէջ տարածել այս տետրակ ։ Մէկ անգամէն 30 օրինակ ծախու առնողին կը ղրկուի ՃՀ ֆրանքով Հատին դինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ) ։

Ինչպէս ամեն լրագիրները, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կունենան Արմենիայի միջոցով մէկի դիմումի առնել կամ մի բան յայտարարել, պատրաստ են ընդունելիրենց ծանուցումները ըստ, լրագրական սովորութեան ։ Ծանուցումներուն գիները նշանակուած են Արմենիայի ճակատը, տառին վրայ հաշուելով. 1 երկսթագրի (գլխագիր) համար 2 սանդիմ և 1 բոլորգրի համար 1 սանդիմ։ 3 անգամ դրուելիք ծանուցումի գինին վրայ 0/0ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գինն վրայ 0/0ի 30 զեղչ։ Սակարկութիւն չընդունուիր ։

Նշանակք Հայաստանեայց. Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւններուն նշանակներովը մէկտեղ փայլուն թղթի վրայ և կանաչ, կապոյտ և գեղին գոյներով ներկուած։ 1 ֆրանգ ։

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍԲԲԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Տաճկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սբբազանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիայի խմբագրատունը ։ Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ ժամանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներովին ։

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած)։
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(*Հայաստանցիներուն պանդխտութեան տխուր հետեւանքներն մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։*) Գինն (90 սնթմ.) 1 ֆրանգ. 20 սնթմ.

Զ. ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց աւարտելոյն (*Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաչունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են*) ։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ ։

Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆՔԸ ՏԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱՒ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (*Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղագրական տեղեկութիւններ կը պարունակէ ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը ։*) Գինն 50 սանթիմ (35 սանթիմ) ։

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՑՈՒՇԱՐԱՐ (Արմենիայի Ա տարեշրջանի Թիւերը այժմ բոլորովին սպառած և մեզանէ ժամանակ չտեսնուի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի 4էկ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են Ցուշարարի մէջ որ ուղիղ դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ) ։ (1 ֆրանք) ։ 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերէն արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար) ։ (15 սնթմ.) ,20 սնթմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ՐՈՑԱՐԻՈ (Ծանօթատոհմի մէջ Թիւրքերէն արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Ցոյներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) ,20 սանթիմ ։

ԺԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՇՏՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իրեւ նմոյշներ զանազան քաղաքներու մէջ և զանազան տպաւորութիւններէ տակ իւրաքանչիւրին գրած ոտանաւորներին որոնք ժամանակին հրատարակուած չլինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորները որոնք իրրեւ նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տպագրուած ազգային երկ արուններին մէջ՝ որոց վերատին տպագրութիւնն վաղուց արդէն արդիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներին մէջ ։ Նմոյշներու մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորները ի՛նչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են։ Գինն (10 սանթիմ) 15 սանթիմ ։

ԻՄ ՀԱՑՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՌՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԼՂԱՐԻՍ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներու պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպանուած և անհետացած է աշխարհէ ։ Գինն 1 ֆրանգ, (75 սանթիմ)։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : François CARRIÈRE
ՄԱՐՍԷՑԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.